



ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱԼԱԹԻԱ-ԵԵՐԱՏՏԻԱ ԵՎ ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

№ ~~40~~ 3731103

«~~10~~» ~~08~~ 2021թ.

Երևան, Հալաբյան 41ա  
Հեռ. 060-71-34-72

**«Կոնվերս բանկ» ՓԲԸ**  
**/ք. Երևան, Կենտրոն, Վ. Սարգսյան 26/1/**  
**Էրիկ Հունանյան**  
**/ք. Երևան, Շենգավիթ, Մայիսի 9-ի փ., 112., բն. 8/**

Ուղարկվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթի-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի հարկադիր կատարող Մ. Գանձանկյանի կողմից կայացված որոշումները՝ <<Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու>> մասին:

**Ծ Ա Ն Ո Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն** Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա արգելանք դնելը, այն առգրավելը և հարկադիր իրացնելը (հարկադիր էլեկտրոնային աճուրդի կամ ուղղակի վաճառքի միջոցով): Հարկադիր էլեկտրոնային աճուրդն իրականացվում է էլեկտրոնային համակարգերի կիրառմամբ [www.harkadir.ajurd.am](http://www.harkadir.ajurd.am) ինտերնետային կայքի միջոցով: Գույքի իրացման ընթացակարգի, մեկնարկի և մեկնարկային գնի մասին ծանուցումն օրենքով նախատեսված դեպքերում կարող է իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքի միջոցով՝ [www.azdarar.am](http://www.azdarar.am) հասցեով:

**ԲԱԺՆԻ ՊԵՏ**  
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ**  
Կատ՝ Մ. Գանձանկյան  
[4/4 07469441](http://4/4.07469441)

 **Ա. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

06.08.2021թ.

ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա և Շենգավիթ վարչական շրջանների բաժնի հարկադիր կատարող Մ.Գանձանակյանս ուսեմնասիրելով 07.04.2021թ. հարուցված թիվ 07469441 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից «02» ապրիլ 2021թ. տրված թիվ ԵԴ/23001/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է Էրիկ Հունանյանից «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ի օգտին բռնագանձել 800.000 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

Պարտապանից պետք է բռնագանձել նաև բռնագանձման ենթական գումարի հինգ տոկոսի չափով գումար, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Իրականացված կատարողական գործողությունների ընթացքում գրավի առարկան փորձագետի կողմից գնահատվել է 648.800 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28,28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Գրավի առարկա հանդիսացող ներքոհիշյալ գույքը

h/h	լոտի անվանումը նկարագիրը	գույքի քանակը	գնահատման գինը	մեկնարկային գինը
1	Ոսկյա թևնոց 1 կտոր՝ 583 հարգ, 7.2 գրամ	1 հատ	118.800 դրամ	89.100 դրամ
2	Ոսկյա մատանի 1 կտոր՝ 750 հարգ, 6.5 գրամ	1 հատ	137.200 դրամ	102.900 դրամ
3	Ոսկյա շղթա 1 կտոր՝ 583 հարգ, 17.5 գրամ	1 հատ	288.800 դրամ	216.600 դրամ
4	Ոսկյա շղթա 1 կտոր՝ 583 հարգ, 6.3 գրամ	1 հատ	104.000 դրամ	78.000 դրամ

Ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ [harkadir.ajurd.am](http://harkadir.ajurd.am) միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 24.09.2021թ.:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:



«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԼԵՅՏԵՆԱՆՏ՝



Մ. ԳԱՆՁԱՆԱԿՅԱՆ

Ծ Ա Ն Ո Ւ Թ Յ ՈՒ Ն Յուրաքանչյուր լուտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լուտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում գետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լուտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լուտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լուտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լուտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լուտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լուտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում նարառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լուտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լուտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լուտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լուտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո: